

ԿԱՆԱԳԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ա. Ա. ԲԵՔԱՐՅԱՆ

Հայերի արտագաղթը Կանադա և Կանադահայ գաղութի ձևավորման ու զարգացման պատմությունը հիմնականում կարելի է բաժանել երեք ժամանակաշրջանի. նախնական կամ տարագրության շրջան (մինչև 1915-ի եղեռներ), գաղութի կազմավորման շրջան (1920—1952) և գաղութի բարգավաճման ու զարգացման շրջան (1952-ից մինչև մեր օրերը)¹: Սույն հոդվածում քննվում են Կանադահայ գաղութի պատմության առաջին երկու ժամանակաշրջանները՝ տարագրության և գաղութի կազմավորման շրջանները, այսինքն՝ ակունքներից մինչև 1952-ը:

Սկսած 1880-ից հայերի որոշակի հատված Օսմանյան կայսրության տարբեր շրջաններից ապրուստ որոնելու նպատակով գաղթել է ԱՄՆ՝ համարելով տեղի բանվորների շարքերը: Այդ թվականից սկսած առաջին հայ տարագիրները երևացել են նաև Կանադայում՝ մասնակցելով կանադական խաղաղօվկիանոսյան երկաթուղու կառուցմանը: Սակայն Կանադա ժամանած առաջին հայը, ըստ երևույթին, Հյուսիսային Օնտարիոյում ոսկի որոնող ոմն Շահին էր²:

Քսաներորդ դարի սկզբներին ամերիկյան գործարաններում աշխատուժի բավականաչափ հագեցածության պատճառով հայ բանվորները սկսեցին համարել նաև Կանադայի հարավային մասում գտնվող մի շարք քաղաքների (Քրանդֆորդ, Սենտ Փաթրիկ, Համիլտոն, Տորոնտո և այլն) ֆաբրիկաները Կանադա գաղթած հայերի մեծամասնությունը տղամարդիկ էին՝ հիմնականում գյուղացիներ, որոնց սկզբնական նպատակն էր մի քանի տարի աշխատել տարագրության մեջ, վաստակել որոշ գումար և վերադառնալ հայրենիք: Կանադայում հայերի հանգրվանային, աշխատանք որոնելուն և ժամանակավոր բնակություն հաստատելուն՝ զգալիորեն նպաստել են Օսմանյան կայսրության մեջ նրանց հետապնդումն ու ճնշումը, ինչպես նաև նյութական անապահովությունը: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ հայերը հիմնականում գաղթել են Կեսարիայից, Բուրսայից, Բալուից, Կարինից, Տարոնից, Կ. Պոլսից, Խարբերդից և առանձնապես Քղիից³: (Սկզբնական շրջանում քղեցիները ապրուստ հայթայթելու նպատակով գնացել են էրզրում, Տրապիզոն, Կ. Պոլիս, որտեղ աշխատել են որպես բեռնակիրներ և խո-

¹ 1915--1920 թթ. կանադահայ գաղութի ձևավորման և ընդլայնման հարցը ստանում է ոչ օրինաչափ, տարերային բնույթ: Այդ ընթացքում կանադահայերը հիմնականում զբաղված էին իրենց կորցրած բարեկամների գտնելու և նրանց Կանադա տեղափոխելու գործով:

² S. S. Armenians in Canada. «Parochial Newsletter», Toronto, 1967, Oct. 1, vol. 1, p. 6:

³ Նախկինում ավելի շատ հայտնի էր Կեղի, Կողորբորդ, Քեղի տարբերակներով: Հիշատակվում է իբրև գյուղ, ավան, գյուղաքաղաք, քաղաք: Գտնվում է Արածանիի (արևելյան միջուկ, աշակողմյան վտակ Քղի գետի աջ ափին, էրզրումից 132 կմ հարավ-արևմուտք):

հարարներ: Այնուհետև պանդխտության շրջանակն ընդլայնվել է՝ իր մեջ ներառելով այնպիսի օտար քաղաքներ, ինչպիսիք են Վառնան, Կահիրեն և այլն: Ի վերջո ամերիկյան միսիոններների քարոզչների ազդեցությամբ հայերը սկսել են մեկնել նաև ամերիկյան քաղաքներ: Մինչև 1908-ը Թուրքիայից այնքան էլ հեշտ չէր մեկնել այլ երկրներ, քանի որ օրինական ճանապարհով այն հնարավոր էր իրագործել միայն արտագաղթի միջոցով, որի համար անհրաժեշտ էր ներկայացնել ճանապարհորդելու իրավունք, հրաժարվել քաղաքացիությունից և ունեցվածքից: Հենց դա էր պատճառը, որ քղեցիները, չնայած ձեռքակալման և բանտարկման վտանգին, հիմնականում մեկնում էին ապօրինի ճանապարհով: 1908-ի սահմանադրությունը հանեց ճանապարհորդելու իրավունքի արգելքը, և Քլիի գյուղացիների համար Կանադան դարձավ ավելի մատչելի: Կանադայում ապրելը հնարավորություն էր տալիս կրթություն ստանալ, ունենալ աշխատանք և բարձր կենսամակարդակ: Սակայն հայերի համար Կանադա ներթափանցելը այնքան էլ դյուրին չէր: Հենվելով «բարձր» ռասայի սկզբունքի վրա՝ կանադական ներգաղթի օրենքները գերադասություն էին տալիս արևմտյան և հյուսիս-արևմտյան Եվրոպայից գաղթողներին: Ըստ վերոհիշյալ սկզբունքի, ամենաստորին աստիճանում ասիացիներն ու նեգրերն էին: Հայերը, չնայած հնդկվրոպացի լինելուն, Փոքր Ասիայի բնիկներ և թուրքական հպատակներ էին, այդ իսկ պատճառով, կանադական իշխանությունները չէին խրախուսում նրանց մուտքը Կանադա՝ Եվ հաճախ նրանք ստիպված ենթարկվում էին ներգաղթի խտրական վերաբերմունք ունեցող խիստ կանոնադրությանը: Բնական է, որ նման պայմաններում այն հայերը, որոնց հաջողվում էր ներթափանցել Կանադա, աշխատանքի մեջ խտրություն չէին դնում՝ ներգրավվելով արտադրության և ծառայությունների տարբեր ոլորտներում: Այսպես՝ Համիլտոնում հայերի մեծամասնությունը աշխատում էր ձուլարաններում, իսկ Կանադայի մյուս քաղաքներում նրանք բացում են սրճարաններ, վարսավիրանոցներ, նպարեղենի և քաղցրավենիքի խանութներ: Բնօրրանում հայերը ապրել են հայկական գյուղաքաղաքներում կամ քաղաքների հայկական թաղամասերում: Ներանք Կանադայում նույնպես ստեղծում են իրենց փոքրիկ համատարր գաղութը: Այսպես օրինակ, Բրանդֆորդում հայկական համայնքը գտնվում էր քաղաքի կենտրոնում: Ժամանակավոր աշխատանքի ընդունված հայ բանվորները ապրում էին հայկական ոճով կահավորված սենյակներում և օգտագործում ազգային ճաշատեսակներ: Այդ կենցաղը նրանց կարծես հնարավորություն էր տալիս գրեթե միշտ լինել հարազատ միջավայրում, խոսել հուզող հարցերի և նորությունների մասին, հայրենիքի մասին: Հետագայում Կանադայում հայ կանանց ի հայտ գալը նպաստեց, որ այնտեղ աստիճանաբար ստեղծվեցին հայեցի ոգին պահպանող ընտանիքներ:

Կանադահայ գաղութի ձևավորման սկզբնական շրջանում հայերը հիմնականում կապված են եղել և գործակցել են իրենց ազգականների հետ: Դա առաջին հերթին վերաբերում է Համիլտոնի, Սենտ Քաթրինզի և Բրանդֆորդի գաղթօջախներին ու բացատրվում է նրանով, որ այդ քաղաքների հայ բնակչության մեծամասնությունը գաղթել էր նույն շրջանից՝ Քլիից: Ավ միանգամայն բնական էր, որ հայրենիքում ունեցած ազգակցական կապերը շարունակվեցին նաև Կանադայում՝ ամրանալով ամուսնությամբ ու կնուն-

¹ Տե՛ս, օրինակ, «Ո՞ր հայերը կրնան Գանատա մտնել», «Գանատա որո՞ք կրնան մըտնել և ի՞նչպէս», «Ամերիկայի և Գանատայի սահմանին վրայ ինչպէս կարելի է անցնել մէկ կողմէն միւրը» հոդվածները Ը. Խաչմանյանի «Ամերիկահայ հանրագիտակ» տարեգրքում (Բոստոն, 1925, էջ 360—369):

քով: Ներգաղթողների մտքերն ու զգացմունքներն համագյուղացիների, հայրենիքում թողած հարազատների հետ էին: Ցանկանալով նպաստել նրանց կրթությանը՝ նորաբնակները ստեղծում են կրթական միություններ, որոնց խնդիրն էր դրամ ուղարկել հայրենիք՝ դպրոց կառուցելու, ուսուցիչներին աշխատավարձով ապահովելու, ինչպես նաև կարիքավոր երեխաների կրթությանն օժանդակելու նպատակով: Դրամական միջոցները կուտակվում էին հավաքույթներից, ճաշկերույթներից և համերգներից: Սկսած 1910-ից հայերը Կանադայում նույնպես ապահովեցին ազգային կրթություն իրենց երեխաների համար: Սակայն հայերենի ուսուցումը սկզբնական շրջանում հնարավոր էր աշխատանքային օրերի միայն առանձին ժամերին կամ շաբաթ ու կիրակի օրերին, քանի որ աշակերտները հաճախում էին նաև կանադական դպրոցներ: Տիրապետել անգլերենին, նշանակում էր ստանալ կրթություն և կենսապայմանների բարելավման հնարավորություն: Չնայած դրան, հայերը անհանգստացած էին, քանզի իրենց երեխաները, դեռևս լիովին չտիրապետելով մայրենի լեզվին, խոսում էին սահուն անգլերեն: Այդ իսկ պատճառով կանադահայ գաղութի ավագները որոշում են պահպանել իրենց ազգային ոգին և սեփական ուժերով ստեղծում են ազգային դպրոցներ: Մինչև 1910-ը երկու փոքր դպրոց է կազմակերպվում Բրանդֆորդում: Այդ գործում իրենց ավանդը ունեցան նաև ամերիկահայերը. դպրոցներում օգտագործվող դասագրքերից շատերը հրատարակվել էին Բոստոնում և Նյու-Յորքում⁵:

Բացի դրանից, արդեն 1900-ական թվականներին կանադահայերը (հիմնականում Սենտ Քաթրինզի, Բրանդֆորդի և Համիլտոնի տարագիրները) եռանդուն կերպով ձեռնամուխ են եղել համեստ հանդեսների կազմակերպմանն ու անցկացմանը՝ արտասանություններով, երգերով, ելույթներով, հանպատրաստից ներկայացումներով⁶: Դրանք կազմակերպվել են բարեգործական նպատակներով դպրոցի կամ գրադարանի սրահում, հայկական ճաշարանում, ակումբում կամ որևէ հայի տանը: Դրանց ընթացքում կատարվել են հանգանակություններ՝ ի նպաստ հայ տարագիրների, դպրոցների և հիվանդանոցների: Այդ հավաքույթները սովորաբար սկսվում էին «Մեր հայրենիք» երգի հոտընկայս կատարումով և եզրափակվում այլ հայրենասիրական երգերով («Երբ կտեսնեմ Հայաստանը», «Ազատն Աստված», «Ազատության այն վառ սերը», «Մենք պետք է կովենք» և այլն):

Մինչև 1920-ական թվականները Կանադայում հայերեն թերթեր և հանդեսներ լույս չէին տեսնում⁷: Այդ ժամանակաշրջանում կանադահայ գաղութում ամենատարածվածը Միացյալ Նահանգներում լույս տեսնող «Հայրենիք» և «Երիտասարդ Հայաստան» հայերեն թերթերն էին: Այդ շրջանում սկսեցին կազմակերպվել հայկական գրադարաններ և ակումբներ, որոնք միաժամանակ ծառայում էին որպես սրճարաններ և քաղաքական հանդիպման վայրեր, իսկ հետագայում նաև դպրոցներ⁸:

⁵ Տե՛ս I. Kaprielian, Armenian Supplementary Schools in Southern Ontario. «Polyphony», 1982, vol. 4, N 2, p. 69:

⁶ Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 11 նոյեմբերի 1905, 6 և 23 մարտի 1907, 7 մարտի 1 25 հուլիսի 1908 և այլն:

⁷ Այդ թվականներին Կանադայում լույս են տեսել «Արարատ» և «Արագած» խմորատի հանդեսները, իսկ հայերեն առաջին պաշտոնական թերթը՝ «Ապագան», հրատարակվել է 1975-ին: Այժմ Կանադայում հայերեն լույս են տեսնում մոտ քառասուն հանդես ու թերթ (մեծամասնությունը իրկոլ լեզվով՝ հայերեն և անգլերեն): Կան նաև օտար լեզվով (անգլերեն և ֆրանսերեն) հրատարակվող հայկական ամսագրեր (մեկ տասնյակից ավելի):

⁸ Տե՛ս I. K. [I. Kaprielian], Immigration and Settlement of Armenians in Southern Ontario: the First wave, «Polyphony», 1982, vol. 4, № 2, p. 25.

1915-ի ցեղասպանութիւնն իր ազդեցութիւնն ունեցած նաև կանադահայ գաղութի վրա: Եթէ մինչ այդ հայ գաղթականները մշտապես ապրում էին այն հույսով, որ պանդխտութիւնը նրանց կյանքում ժամանակավոր բընույթ է կրում և ապրուստի միջոցներ հայթայթելուց հետո պատրաստվում էին վերադառնալ հայրենիք, ապա 1915-ից հետո գաղթողներից շատերը ստիպված դարձան Կանադայի մշտական բնակիչներ: Այնուհետև սկսվում է գաղթավայրի ձևավորման ու զարգացման մի նոր շրջան, որն ուղեկցվում է առանձին հաստատութիւնների ու միութիւնների ստեղծմամբ: Երբ 1915-ին հայրենիքում կործանվում ու ոչնչանում էին գյուղերը, Հյուսիսային Ամերիկայում, որպէս սոցիալ-բարեգործական ու կրթական հաստատութիւններ, իրենց գործունեութիւնն էին շարունակում հայկական հայրենակցական միութիւնները՝ հանուն իրենց հայրենակիցների և աշխարհով մեկ սփռված նըրանց սերունդների փրկութեան: Քղեցիների հայրենակցական միութիւնները⁹, որոնք ստեղծվեցին առաջին համաշխարհային պատերազմից հետո, արձագանքեցին քղեցի փախստականների կարիքներին, հոգացին նրանց մասին: Չնայած ճակատագրի բերումով արդեն Կանադայի մշտական բնակիչներ դարձած հայ գաղթականները որոշակի կապի մեջ մտան այդ երկրի տնտեսական կյանքի հետ և իրենց դժվարին աշխատանքով զգալիորեն աջակցեցին, նպաստեցին Կանադայի տնտեսութեան զարգացմանն ու արդիականացմանը, նրանք մշտապես կապված էին իրենց հայրենիքի հետ՝ հավատարիմ մնալով իրենց ազգին, լեզվին և կրոնին: Ընտանիքի, տան և կարողութեան կորուստը, թուրքական իշխանութեան թշնամական վերաբերմունքը ետ վերադարձող հայերի նկատմամբ՝ խոր հարված հասցրին Օնտարիոյում ապաստանած հայերին և միաժամանակ նպաստեցին հայկական համայնքների ծավալմանը և զարգացմանը Կանադայում: Եվ ժամանակավոր եկած բանվորները, օգտվելով կանադական քաղաքացիութեան իրավունքից, փորձեցին գտնել իրենց կորցրած բարեկամներին, փրկել փախստականներին և տեղափոխել Կանադա: Իսկ կանադական իշխանութիւնները մերժում էին հայ գաղթականների ամեն մի խնդրանք իրենց Կանադայում տեղավորելու համար՝ հայ ազգին վերագրելով ասիական ծագում¹⁰:

Կանադահայերը, համոզվելով, որ ազգապահպան և մշակութային գործունեութեան բնագավառում այլևս չեն կարող հույս դնել կորցրած հայրենիքի աջակցութեան վրա, հասկացան, որ իրենց սրբազան պարտականութիւնն է պահպանել ու լրացնել իրօնց հետ բերած ազգային-մշակութային ժառանգութիւնը, ինչպէս նաև հայկական անհատականութիւն սերմանել իրենց զավակների մեջ: Աստիճանաբար ստեղծվեցին դպրոցական կոմիտեներ կամ դպրոցական խորհուրդներ, որոնց անդամները զբաղվում էին դպրոցների հետ կապված հարցերով. գտնում էին համապատասխան շէնքեր, վարձում ուսուցիչներ, որոշում նրանց աշխատավարձը, մասնակցում քննութիւններին, օգնում ուսուցիչներին՝ պարբերաբար կազմակերպելով համերգներ, ներկայացումներ, զրոսախնջույքներ և բանախոսութիւններ: 20-ական թվականներին կանադահայ դպրոցի շէնքի սենյակները սովորաբար վատ էին լուսավորված և լեփ-լիցուն էին աշակերտներով, բայց դա լավագույնն էր,

⁹ Այդ միութիւնները կոչվում էին Քղի (Գեղի) գյուղաքաղաքի և համանուն գափառի գյուղերի անուններով (տե՛ս, օրինակ, «Պատմութիւն Կարենյ կուսակալութեան. Քղի գափառի Զանախի գիւղի», Պելվիլ, 1977, էջ 68—72):

¹⁰ Տե՛ս «Գանատահայ գաղութը. Անոր կազմութիւնը եւ նորեկներու ներգաղթը ցեղային ծագման թիւրիմացութեան ետք» հոդվածը Կ. Գորգոյանի «Ամենուն տարեգիրքը» ժողովածուում, Պէրուս, 1962, էջ 333:

որ գաղութը կարող էր ձեռք բերել իր կազմավորման սկզբնական շրջանում: Մնողները, կախված ապահովվածության աստիճանից, վճարում էին ուսման վարձ՝ 25—30 ցենտ յուրաքանչյուր երեխայի համար: Սակայն կրթություն ստանալու համար ուսման վարձը անհրաժեշտ պայման չէր, և բոլոր դպրոցահասակ երեխաները, որպես կանոն, անկախ ծնողների վճարունակությունից, ընդունվում էին դպրոց: Այսպես, Բրանդֆորդի հայկական դպրոցում վճարում էին միայն դասագրքերի համար, իսկ ուսուցումը ձեր էր: Երեխաները սկզբում դպրոց էին հաճախում յուրաքանչյուր երեկո ժամը 7-ից մինչև 9-ը, իսկ հետագայում՝ շաբաթը երեք անգամ: Համայնքը ձգտում էր ընտրել այնպիսի ուսուցիչ, որը կատարելապես տիրապետեր հայոց լեզվին, հաճույքով ու կամովին իր եռանդն ու ժամանակը նվիրաբերեր հայ երեխաների կրթության ու դաստիարակման շնորհակալ գործին: Այդպիսի հնարավորություն գաղութը ուներ, քանի որ, ինչպես արդեն նշվեց, 20-ական թվականներին զգալիորեն աճեց հայերի ներգաղթը Կանադա, իսկ ներգաղթողների մեջ կային բավականին թվով ուսուցիչներ: Բացի գրաճանաչությունից դպրոցում ուսուցանում էին հայ ժողովրդի և կրոնի պատմություն, սովորեցնում հայկական ժողովրդական ու հայրենասիրական երգեր: Դարասկզբին դասագրքերը հիմնականում ներմուծվում էին Կ. Պոլսի, Նյու-Յորքի, Բոստոնի հրատարակչություններից: Դրանցից արժե հիշատակել Հ. Զազմագճյանի «Քերական-ընթերցարանը» (1916) և Ռ. Զարդարյանի «Մեղրագետը» (1927)¹¹, Հայկական դպրոցներն ունեցան իրենց որոշակի դերը կանադահայ երեխաների կրթության և դաստիարակության գործում. հայերեն գրել-կարդալ սովորեցնելուց բացի, նրանց տարրական Վաղափար էին տալիս հայ երաժշտության, թատրոնի և մշակույթի վերաբերյալ: Այս առումով պետք է նշել, որ մինչև 1925-ը Կանադայում թե՛ հայկական դպրոցները, թե՛ գրադարանները, թե՛ կազմակերպությունները, առհասարակ ամբողջ գաղութը զգալի աշխատանք կատարեցին և շատ կարճ ժամանակամիջոցում հզոր ուժ դարձան ուժացման դեմ:

Միաժամանակ կանադահայերը ձգտում էին պահպանել սեփական մշակույթը օտար ափերում: Դա բավականին դժվար էր, քանի որ արևմտահայ մշակույթն արդեն մնացել էր առանց իր սնուցող հիմնական ստեղծագործող աղբյուրների. արևմտահայ մտավորականությունը գրեթե լիովին բնաջնջվել էր, և հայերի մի սովոր զանգված մնացել էր առանց հոգևոր ուղեցույցի ու ղեկավար ուժերի: Այդ հանգամանքը մարդկանց ստիպում էր բավարարվել նրանով, ինչ որ նրանք կարողանում էին գտնել նոր միջավայրում և նոր պայմաններում:

1918-ի փետրվարի 23-ին Սենտ Քաթրինզի «Ինքնավար Հայաստան» դերասանական խումբը բեմադրել է Ս. Շահենի¹² «Կարկառուն կամարներ» վեց գործողությամբ հեղափոխական դրաման, որին ներկա էին ոչ միայն Սենտ Քաթրինզի, այլև շրջակա քաղաքների՝ Գոլթի, Բրանդֆորդի, Համիլտոնի, Նիագարաֆոլսի հայ և անգլիացի թատերասերները:

Բրանդֆորդի «Կայծ» դերասանական խումբը 1918-ի նոյեմբերի 16-ին բեմադրել է Ս. Շահենի «Տանջվածները», 1919-ի ապրիլի 13-ին՝ «Քսան կա-

¹¹ Տե՛ս I. Kaprielian, Armenian Supplementary Schools in Southern Ontario. «Polyphony», 1982, vol. 4, № 2, p. 70—71.:

¹² Շահեն, Սեդրակ (Շահինյան, 1887—1975), հայ գրող, հասարակական գործիչ, թատերագիր: Նրա «Կարկառուն կամարներ» (1917), «Քսան կախողաններ» (1918), «Զեյթուն» (1920) և այլ դրամաներում արտացոլված է հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնակալության դեմ:

խաղաններ», իսկ 1920-ի փետրվարի 1-ին՝ «Կարմիր աղչիկ» թատերգությունները: Մամուլի վկայությունները բոլոր ներկայացումներն արժանացել են հանդիսականների ջերմ ընդունելությանն ու բարձր գնահատականին¹³: Հատկապես աչքի է ընկել երիտասարդ, խոստումնալից դերասանուհի Արշալույս Աղաճանյանը, որի փայլուն խաղը միշտ էլ մեծ տպավորություն է թողել հանդիսականների վրա: «Կայծ» դերասանական խումբը հյուրախաղերով հանդես է եկել նաև Համիլտոնում, Նիագարաֆոլսում և այլ հայաշատ քաղաքներում: Հետագայում Բրանդֆորդում բարեգործական նպատակներով բեմադրվել են Գ. Երիցյանի (1879—1966) «Ուշ լինի, նուշ լինի» (1927-ի մայիսի 24-ին՝ «Խրիմյան» գրադարանի վարչության կողմից), Ծ. Օտյանի և Մ. Կյուրճյանի «Զարչը Արթին աղա» (1927-ի հուլիսի 24-ին՝ Հայ կարմիր խաչի Բրանդֆորդի մասնաճյուղի կողմից), Զ. Արշակյանի¹⁴ «Գլուժի վաճառականը» (1928-ի դեկտեմբերի 30-ին՝ Խրիմյան գրադարանի վարչության կողմից), Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» (1931-ի մայիսի 25-ին՝ Կարմիր խաչի կողմից)¹⁵ կատակերգությունները և այլն:

Գաղութի կազմավորման շրջանում թատերական փորձեր են կատարվել նաև Համիլտոնում, Նիագարաֆոլսում, Գոլթում, Գոլֆում, Տորոնտոյում և Մոնրեալում: Բեմադրվել են Մ. Կյուրճյանի և Ծ. Օտյանի «Զարչը Արթին աղա», Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները», Ս. էքմեքճյանի «Քիթ Կարապետ կամ Ամերիկահայ փեսացուն», Ա. Մուրատյանի «Երեք պարծենկոտները», Գ. Ռշտունու «Վեցուկես պորտի ժառանգ ինկած սնուկը», Ու. Հաջիբեկովի «Արշին մալ ալան», Տ. Գալեմճյանի «Մուրված ճամփորդը», Ք. Ժպտունու «Պաշտոնս է խրոմփալ» կատակերգությունները, Լ. Մարտիրոսյանի «Հակոբ Հաբեթը», Ա. Ահարոնյանի «Արցունքի հովիտը» դրամաները և այլ պիեսներ¹⁶:

Կանադահայ գաղութի կազմավորման գործում և ազգային-հասարակական կյանքում որոշակի դեր են խաղացել Սենտ Քաթրինզի, Համիլտոնի և Տորոնտոյի գաղթօջախները:

Սենտ Քաթրինզի համայնքը 1918-ից ունեցել է իր բարեգործական հաստատությունը, իսկ 1919-ին հիմնել է առաջին հայկական դպրոցը: Այստեղ տեղին է նշել, որ մինչև 1925-ը Սենտ Քաթրինզում տարբեր կուսակցությունների հովանու ներքո գործել են առանձին հայկական դպրոցներ՝ սակավաթիվ ունենդիրներով¹⁷: Սակայն 1915-ի ցեղասպանության սարսափը և ու-

¹³ Տե՛ս Ս. Պեժյան, «Տանջվածները» Պրենտֆորտի մեջ, «Երիտասարդ Հայաստան», Զիկագո, 1918, 11 դեկտեմբերի: Առաջեստ, «Քսան կախաղանները» Պրենտֆորտի մեջ, «Երիտասարդ Հայաստան», Զիկագո, 1919, 10 մայիսի: Կառպիս, «Առցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն. Պրենտֆորթ», նույն տեղում, 1920, 13 մարտի:

¹⁴ Արշակյան, Զարեհ (Արշակ, ծնվ. 1898), հայ դերասան, գրող: Մեկել է Կ. Պոլսում: Սովորել է տեղի Մերամեթյան և էսայան վարժարաններում: Խաղացել է տարբեր թատերախմբերում՝ հանդես գալով կատակերգակ և դրամատիկ դերերում, որոնցից հիշատակության արժանի են Սաղաթելը («Պատվի համար»), Հայրապետը («Նամուս»), Թոմասը («Տրիբիբ»), Սուլթան բեկը («Արշին մալ ալան»), Ոսկանը («Զար ոգի»): Գրել է փոքրիկ վոդեվիլներ 1931—1932 թթ. հրատարակել է «Խրախճանքի տարեգրքը», որի էջերում ունի երգիծական նյութեր:

¹⁵ Տե՛ս «Հայրենիք», 1927, 5 հունիսի, 14 օգոստոսի, 1929, 24 հունվարի, 1931, 21 հունիսի:

¹⁶ Տե՛ս, օրինակ, «Հայրենիք», 1921, 4 հունվարի, 19 հունվարի, 1926, 20 մայիսի, 1927, 15 մայիսի, 1928, 2 ապրիլի, 10 մայիսի, 5 հոկտեմբերի, 1930, 1 հուլիսի, 1934, 14 ապրիլի և այլն:—«Երիտասարդ Հայաստան», 1919, 17 դեկտեմբերի:—«Արարատ», Զորջթաուն, 1927, № 6, № 7:

¹⁷ Տե՛ս H. Torosian, The First Armenian Church in Canada: St. Gregory the Illuminator. «Polyphony», Toronto, 1982, v. 4, № 2, p. 87:

նեցած հետևանքները, իր արհավիրքներով հանդերձ, Սենտ Քաթրինզի հայերի մեջ առաջ բերեց համախմբվածություն և միասնություն: Նրանց համար 20-ական թվականները իրոք որ դարձան բեղուն համագործակցության շրջան:

Երբ կանադահայերը ցեղասպանությունից փրկված իրենց հարազատներին գտան ու բերեցին Կանադա, Սենտ Քաթրինզի հայ համայնքը զգալիորեն փոխեց իր էությունը՝ գերակշռող տղամարդ պանդուխտներից վերածվելով ընտանեկան համայնքի: Այն տղամարդիկ, որոնք ցեղասպանության ժամանակ կորցրել էին իրենց կանանց, մեկնեցին «հին երկիր», գտան հարսնացուներ, նրանց բերեցին Սենտ Քաթրինզ, գնեցին տներ և ստեղծեցին նոր ընտանիքներ: Այդ տարիներից սկսած ձևավորվեց Սենտ Քաթրինզի հայ համայնքը: Իրենց հոգևոր ժառանգությունը պահպանելու նպատակով Սենտ Քաթրինզում գործող տարբեր հայ կուսակցությունները, ուշադրություն չըդարձնելով իրենց քաղաքական հայացքների վրա, հրաժարվեցին իրենց փոքրիկ դպրոցներից, համախմբվեցին և համատեղ շանքերով 1925-ին կազմակերպեցին մեկ միասնական հայկական դպրոց՝ անվանելով այն Բաֆֆի վարժարան¹⁸: Դա հնարավորություն ստեղծեց, որպեսզի երեսունհինգ հայ երեխա շաբաթական երեք անգամ երկու ժամով հաճախեն հայկական դպրոց և սովորեն հայերեն: 1926-ից Բաֆֆի վարժարանի հովանավորությունը ստանձնեց 1925-ին Լ. Պապայանի ղեկավարությամբ Տորոնտոյում ստեղծված Կանադահայ միությունը:

1930-ին Կանադահայ միության կողմից՝ Լ. Պապայանի անմիջական օգնությամբ ու նախաձեռնությամբ, ինչպես հայ, նույնպես և օտարազգի բարերարների նվիրատվությունների հաշվին Սենտ Քաթրինզում կառուցվում է երկհարկանի մի շենք, որի վերին հարկը ծառայում է իբրև եկեղեցի, իսկ ներքին հարկը՝ դպրոց, գրադարան և հավաքույթների ու ներկայացումների սրահ (300 տեղանոց): Այդ եկեղեցին, որն անվանվում է ս. Գրիգոր Լուսավորիչ, Կանադայում գործող առաջին հայ եկեղեցին է: Դպրոցի առաջին ուսուցիչներից էին Սենեքերիմ Զիշեքյանը և Գրիգոր Տեր-Գրիգորյանը: 1945-ին կազմակերպվում է եկեղեցու երգչախումբը, որի անգամները սկզբնական շրջանում հիմնականում եղել են աղջիկներ՝ բոլորն էլ ծնված Կանադայում: 1934-ին նույն Սենտ Քաթրինզում բացվել են «Յառաջ» վարժարանը և «Անդրանիկ» ակումբը, որոնք ծավալել են լայն ազգապահպան գործունեություն և գործում են առ այսօր¹⁹: Սենտ Քաթրինզի հայ համայնքը, շնայած փոքրաթիվ լինելուն, իր կազմավորման առաջին իսկ օրերից սկսած ծավալել է լայն ու խանդավառ ազգապահպան գործունեություն: Դեռևս 1920-ական թվականների կեսերին Սենտ Քաթրինզում կազմակերպվել են Հայաստանի օգնության կոմիտեի և «Պետական հայ կարմիր խաչի ընկերության» մասնաճյուղերը, որոնք գործել են տասնմեկ տարի և իրենց ավանդը ներդրել Մայր հայրենիքի ժողովրդական տնտեսության զարգացման գործում: Բացի դրանից, Սենտ Քաթրինզի բազմաթիվ հայ երիտասարդներ մասնակցել են Նբրիորդ աշխարհամարտին: Համայնքը հանգանակություն է կատարել և իր ավանդը մուծել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հիմնադրամին, ինչպես նաև մասնակցել Սփյուռքում իրագործվող մի շարք այլ հայրենասիրական միջոցառումների²⁰:

¹⁸ Տե՛ս նույն տեղը:

¹⁹ Տե՛ս Կ. Գեորգեան, Ամենուր տարեգիրքը, Պելլուս, 1962, էջ 347:—«Հորիզոն», Մոնրեալ, 1985, 12 օգոստոսի, էջ 2:

²⁰ Տե՛ս Ա. Աշեան, Վիճակացոյց եւ պատմութիւն Առաջնորդական թեմին Հայոց Ամերիկայի. 1948, Հրատ. Ամերիկայի Հայոց առաջնորդարանին, Նյու-Սթորթ, 1949, էջ 233:

Օնտարիո լճի արևմտյան ափի գեղատեսիլ վայրում գտնվող Համիլտոն քաղաքում հայերը սկսել են հաստատվել 1900-ական թվականներից: Այդ տարիներին հայերի (մեծ մասամբ՝ քղեցի) թվաքանակը Համիլտոնում եղել է հազարից ավելի²¹: Հայերի մեծամասնությունը որպես բանվոր աշխատում էր Ֆորդի ավտոմոբիլային գործարանում: Եվ երբ հետագայում Ֆորդը իր գործարանը փոխադրեց Դետրոյտ, հայ բանվորների կեսից ավելին նույնպես փոխադրվեց այնտեղ: Այդ պատճառով հայերի թվաքանակը Համիլտոնում զգալիորեն պակասեց և 1940-ական թվականների վերջերին կազմում էր ընդամենը 300 մարդ (85 տոկոսը քղեցիներ էին)²²:

Համիլտոնի համայնքում գործում են Համազգային մշակութային միության, ՀՕՄ-ի և Քղեցիների հայրենակցական միության մասնաճյուղերը, ինչպես նաև Հայ ուսումնական մարմինը: Համայնքը շունի հայկական եկեղեցի, սակայն գործում է եկեղեցական հանձնախումբը, որն ընտրվում է երկու տարով և սերտ կապեր է պահպանում Ամերիկայի Հայոց առաջնորդարանի հետ: Եկեղեցական միջոցառումներ անցկացնելու անհրաժեշտության դեպքում դիմում են անգլիական եկեղեցու ծառայությանը:

Համիլտոնի համայնքն ունի նաև իր սեփական երկհարկանի և երկու ընդարձակ սրահներով ակումբը, որը կառուցվել է 1950-ին Հակոբ Մուրատյանի և ազգությամբ հույն, բայց հայախոս, Նիկոլա էլմասիտտիսի նախաձեռնությամբ:

Առաջին հայերը ինչպես Կանադայի Օնտարիո նահանգի մյուս քաղաքներում (Սենտ Փաթրիկս, Բրանդֆորդ, Համիլտոն և այլն), այնպես էլ Տորոնտոյում բնակություն են հաստատել 1890-ական թվականներին: Սակայն մինչև առաջին համաշխարհային պատերազմը Տորոնտոյում բնակվող հայերի թվաքանակը շատ քիչ է եղել: 1920-ական թվականների ընթացքում ներգաղթողների նոր ալիքը ավելացրեց Տորոնտոյի հայերի թվաքանակը՝ հասցնելով այն երկու հարյուր մարդու²³: Այդ ժամանակաշրջանում Տորոնտոյի հայերից շատերը ներգրավվում են գորգի արդյունաբերության մեջ, աշխատում Պ. Գուրյանի և Լ. Պապայանի գորգատներում կամ զբաղվում գորգ վաճառելով, մաքրելով ու վերանորոգելով՝ ստեղծելով գորգի առևտրի իրենց սեփական փոքր տները:

Կանադայում բնակություն հաստատած առաջին հայերից էր Կանադայի առևտրական կյանքում փայլուն դիրք գրաված, կանադահայ հայտնի գորգավաճառ և անվանի հասարակական գործիչ Լևոն Պապայանը, որը մեծ դեր է խաղացել կանադահայ գաղութի և հատկապես Տորոնտոյի հայ համայնքի ստեղծման ու զարգացման պատմության մեջ: Նա ծնվել է Բուրսայում, որտեղ և ստացել է նախնական կրթություն: Այնուհետև ավարտել է Կ. Պոլսի «Կալաթա սերա» լիցեյը: 1896-ին թողնելով Թուրքիան՝ հաստատվում է Մոնրեալում, որտեղ իր փեսայի՝ Պ. Գուրյանի հետ զբաղվում է արևելյան գորգերի և ասեղնագործական իրերի առևտրով: 1902-ին Լ. Պապայանը տեղափոխվում է Տորոնտո, որտեղ գորգավաճառների ավելի ուժեղ մրցակցություն կար: Բնականից օժտված լինելով խելքով ու գործարարությամբ՝ նա կարողացավ կարճ ժամանակամիջոցում զոհացնել իր հաճախորդներին և գործարար կապեր հաստատել արտասահմանյան շատ շուկաների և վաճառատների հետ: Չնայած իր խիտ զբաղվածությանը, Լ. Պապայանը ծավա-

²¹ Տե՛ս Կ. Գեորգեան, Ամենուր տարեգիրքը, Պէյրուս, 1962, էջ 346:

²² Տե՛ս Ա. Աշեան, Եջվ. աշխ., էջ 121:

²³ Տե՛ս Օ. Teghtsoonian, Armenians in Toronto: the Early Years. «Polyphony». 1982, vol. 4, № 2, p. 95:

լում է նաև լայն հասարակական ու հայրենասիրական գործունեություն: «Պատերազմի ընթացքին,—ինչպես նշում է ինքը՝ Լ. Պապայանը,—երբ մեր ժողովուրդը այնքան խժոժություններու զոհը կ'ըլլար, բնական է ո՛չ մէկ հայ կրնար անտարբեր մնալ: Ամէն ոք, ուր ալ գտնուէր, ի՛նչ դիրքի տէր ալ ըլլար, պէտք է կատարէր պարտականութեան իր բաժինը:

Տրուած ըլլալով Գանատայի ազնիւ ժողովուրդի ջերմապէս համակրական վերաբերումը մեզ հանդէպ, աշխատեցայ որ՝ մէկ կողմէն տեղական թերթեր հետաքրքրուին մեզմով, ու միւս կողմէ՝ գանատական ժողովուրդի այդ ինքնաբոլոս տրամադրութիւնը աւելի գործնական ու կազմակերպուած ձևով մը արտայայտուի: Ուրիշներու եւ իմ կողմէ կատարուած այդ ջանքերուն արդիւնքը եղաւ Armenian Relief Association-ը²⁴, որուն իրենց գործօն մասնակցութիւնը բերին շատ կարեւոր գանատացի հարուստներ:

Այս ընկերութիւնը,—անուհետև շարունակում է Լ. Պապայանը,—ընդհ. պատերազմի վերջին տարիներուն, հայ կարօտեալներու ի նպաստ մէկ միլիոն տոլարի մօտ գումար մը հաւաքած եւ յատկացուցած է իր նպատակին:

Այս ընկերութիւնն է դարձեալ, որ 1923 թուին Յունաստանէն 50 հայ որբեր Գանատա փոխադրել տուաւ եւ այժմ, մասնաւոր ազարակ-որբանոցի մը մէջ կը դաստիարակէ զանոնք, իբր ապագայ երկրագործներ: Վերջերս այս որբերուն եկան միանալու 40 նորեր եւս»²⁵:

1915-ի Մեծ եղեռնից, ինչպես նաև հուլիս-թուրքական պատերազմից հետո (1921—1922) շատ հայ որբեր տեղափոխվեցին Քորֆու (Հունաստան), որտեղ նրանց խնամքը ապահովեցին բարեգործական ընկերությունները, ինչպես օրինակ, Լոնդոնի Lord Mayor ֆոնդը: Կանադայի Հայերի օգնության միությունը իր կազմավորումից անմիջապես հետո կարողացավ կանադահայ իշխանություններից թույլտվություն ստանալ հայ որբերին Քորֆուից Կանադա տեղափոխելու համար: Որբերի առաջին խումբը՝ 8—10 տարեկան հիսուն տղա, 1923-ին Լ. Պապայանի նախաձեռնությամբ բերվեց Կանադա՝ Տորոնտոյից ոչ հեռու գտնվող Ջորջթաուն գյուղաքաղաք: Որբերը տեղավորվեցին Հայերի օգնության միության կողմից քսաներեք հազար դոլարով գնված ազարակում: Այնուհետև այնտեղ նրանց միացան ևս հիսուն որբ (սկզբում՝ քառասուն, հետո՝ տասը), և որբերի ընդհանուր թվաքանակը կազմեց հարյուր հոգի: Նշենք, որ Ջորջթաունի որբերի խնամքը 3—4 տարի իրականացրեց Հայերի օգնության միությունը՝ կանադացիների նվիրատվությունների միջոցով: Վերոհիշյալ ազարակը այդ տարիներին հայտնի էր որպես «Հայ տղաների ազարակ», իսկ տղաներին շուտով կոչեցին «Ջորջթաունի տղաներ»: Վերջիններս հայկական կրթություն ստանալուն զգալիորեն նպաստել և օժանդակել են Պապայան ամուսինները²⁶:

Լևոն Պապայանի անուղղակի կապը «Ջորջթաունի տղաների» հետ սկսվել է դեռևս 1921—22 թթ., երբ նա ստանձնել է Հայերի օգնության ֆոնդի փոխբարտուղարի պաշտոնը: Այդ տարիներին նրա անխոնջ ջանքերի և առատաձեռն նվիրատվությունների շնորհիվ զգալիորեն աճեց վերոհիշյալ ֆոնդը: Լ. Պապայանը վճռական և ազդեցիկ դեր խաղաց հայ որբերի ճակատագրի հարցում. երբ 1922-ին Հայերի օգնության միությունը կազմեց

²⁴ Հայերի օգնության միություն: (Չշտթեկ Հայ օգնության միության հետ):

²⁵ Լ. Պապայան, Պատեհութիւններու արժեքը, Լ. Խաչմանյանի «Ամերիկահայ հանրագիտակ» տարեգրքում, 1925, Բոստոն, էջ 350:

²⁶ Տորոնտոյի բարերարուհի տիկին Փերուզ Պապայանը (Պենլլան, 1891—1976) ծնվել է Կեսարիայում: Փոքր հասակում ծնողների հետ փոխադրվել է Անգլիա, որտեղ և ստացել է սկզբնական կրթությունը: 1908-ին ամուսնացել է Լ. Պապայանի հետ, փոխադրվել Տորոնտո և նվիրվել ազգօգուտ գործունեության:

որբերին Կանադա տեղափոխելու ծրագիրը, նա հասարակական կարգով նըշանակվեց այդ կազմակերպության պատվավոր քարտուղար, իսկ հետագայում ընտրվեց Ջորջթաունի հայ տղաների Տան և Ագարակի կոմիտեի անդամ, որի պարտականություններն անմիջականորեն առնչվում էին հայ որբերի հոգսերի ու բարօրության հետ: Ինչպես հայտնի է, Լ. Պապայանը միակ հայն էր վերոհիշյալ կազմակերպություններում²⁷, և միմիայն նրան ենք պարտական, որ Ջորջթաունի տղաները հնարավորություն ստացան սովորելու հայերեն: Այդ կազմակերպությունների հիմնական նպատակը և սկզբունքը ի սկզբանե հայ տղաներին կանադացի դարձնելն էր, սակայն Լ. Պապայանի մեծ ջանքերի շնորհիվ, բազմաթիվ վիճարանություններից, փաստարկներից ու պնդումներից, անհրաժեշտ դասագրքեր ձեռք բերելուց հետո հնարավոր եղավ հասնել այն բանին, որ տղաները սովորեն իրենց մայրենի լեզուն: Դա, իհարկե, հայերին օգնող կազմակերպությունների կողմից մեծ զիջում էր և առաջին հերթին խոսում է Լ. Պապայանի հաստատակամության, հայրենասիրության, դիվանագիտության, աշխատասիրության ու հնարավորությունների մասին:

Դրանից հետո էլ Լ. Պապայանը շնորհակալ Ջորջթաունի տղաներին: Նա դարձավ նրանց մշտական այցելուն, բարեկամն ու խորհրդատուն: Նա նրանց հետ խոսում էր միայն հայերեն և անընդհատ հիշեցնում տղաներին իրենց ազգի սրբություն սրբոցի՝ լեզվի, գրականության, մշակույթի ու հոգևոր ժառանգության մասին:

1926-ին «Ջորջթաունի տղաները», որպես իրենց երախտագիտության առհավատչյա, սկսեցին հրատարակել Կանադայում առաջին հայկական հանդեսը՝ «Արարատ» ամսագիրը (հայերեն և անգլերեն), որը ծառայում էր իբրև հաղորդակցական միջոց ավագ սերնդի և «տղաների», ինչպես նաև Օնտարիոյի հայկական ուրիշ համայնքների միջև²⁸: Երբ ուսուցիչ Ա. Ալեքսանյանը ձեռնամուխ եղավ իր ազգաշունչ ծրագրի իրագործմանը, Լևոն Պապայանը հանդիսացավ նրա ամենահռանդուն, ամենաջերմ և, որ շատ կարևոր է, առաջին պաշտպանը՝ ցույց տալով բարոյական ու նյութական օգնություն²⁹: Ընդհանրապես, Ջորջթաունի որբերի վերաբերյալ բոլոր բանակցություններում և որոշումների ընդունման գործում Լ. Պապայանը հայ խիղճն էր. նա ոչ միայն ներկայացնում էր իր սեփական հայացքներն ու Կանադայի հայկական համայնքների ձգտումները, այլև ազգի փշրված հույսըն էր: Նման վարքագիծը հաճախ բախվում էր Ջորջթաունի հայ տղաների տան և ագարակի կոմիտեի այլ՝ օտարազգի անդամների տարամետ տեսակետների հետ, բայց Լ. Պապայանը, հենվելով իր ճկուն հայացքների տրամաբանական ու համոզիչ հիմքի վրա, կարողանում էր պահպանել քաղաքական տարաձայնությունների հանդուրժելի մակարդակը³⁰:

Վերջացնելով մեր համառոտ խոսքը Լ. Պապայանի ազգօգուտ գործու-

²⁷ Տե՛ս J. Apramian, Levon Babayan and Georgetown Boys. «Nor Serount», Toronto, 1976, № 1, p. 22:

²⁸ The Georgetown Boys. 50 years in Canada. «Nor Serount», Toronto, 1973, № 6, p. 7, J. Apramian, Levon Babayan and Georgetown Boys. «Nor Serount», Toronto, 1976, № 1, p. 22. (Տե՛ս նաև Եսայի՝ «The Georgetown Boys. Toronto, 1976», p. 10—11):

²⁹ Մասնավորապես, ամսագրի գոյության երկուսուկես տարվա ընթացքում Լ. Պապայանը նվիրաբերել է մոտ 1200 դոլար՝ հայերեն տպատառերով գրամբեհա և բազմացնող մեքենա ձեռք բերելու համար: Բացի դրանից, նա նվիրատվություններ է արել ամսագրի բաժանորդագրության ու այլ ծախսերի համար:

³⁰ Տե՛ս J. Apramian, Levon Babayan and the Georgetown Boys. «Nor Serount», Toronto, 1976, № 1, p. 15:

նեության մասին՝ միաժամանակ նշենք, որ Կանադայի ամենահին հայկական հաստատությունը 1896-ին Պապայանի հիմնած գորգի ընկերությունն է: Միայն դրանից հետո Ս. Ութուշյանը հիմնեց թուրք-պարսկական գորգի ընկերությունը³¹:

Ինչ վերաբերում է Ջորջթաունի տղաների հետագա ճակատագրին, ապա պետք է նշել, որ Հայերի օգնության միությունը 1926-ի կեսերին հրաժարվեց որբերի խնամակալությունից և նրանց հանձնեց կանադական Միացյալ եկեղեցու աշխատանքի բաժանմունքի տնօրինությանը, որին փոխանցվեց նաև ագարակի սեփականատիրությունը: Այնուհետև, որբօրին մեկուկես տարի խնամելուց հետո, հիշյալ հաստատությունը նրանց ցրեց, իսկ ագարակը սկսեց օգտագործել սեփական նպատակների համար: Հետագայում Միացյալ եկեղեցին ագարակի 230 աքր³² տարածությունամբ հողամասից 180 աքրը վաճառեց զանազան կազմակերպությունների՝ իրեն պահելով միայն ագարակի շենքերը³³:

Այստեղ հարկ է նշել, որ Հայերի օգնության միության ճակատագրական սխալն էր Ջորջթաունի ագարակի և նրան շրջապատող հողատարածության սեփականատիրության փոխանցումը Միացյալ եկեղեցուն: Եթե չլիներ Հայերի օգնության միության հրաժարականը, ապա այսօր կանադահայ գաղութն ավելի քան մեկ միլիոն դուլարի արժողությամբ կալվածք կունենար: Դժբախտաբար, Ջորջթաունի որբերից շատերը այժմ ցրվել են աշխարհով մեկ և կանադահայ գաղութի հետ կապ չեն պահպանում (նրանց մի մասն էլ արդեն մահացել է):

Ջորջթաունի տղաներից հետո իրագործվել է հայ երիտասարդության ևս երկու խմբերի կազմակերպված մուտքը Կանադա: 1925-ին և 1927-ին Միացյալ եկեղեցու հովանավորությամբ քսան հայ աղջիկ մուտք գործեց Կանադա՝ տնային սպասուհիներ աշխատելու նպատակով³⁴:

Ինչպես արդեն նշվեց, 1920—1930-ական թվականներին բավական թրվով հայեր են ներգաղթել Տորոնտո: Սկզբնական շրջանում գորգերի առևտրով զբաղվելուց բացի, նրանք բացում են, ինչպես ասացինք, արհեստանոցներ, խանութներ: Իրենց նյութականի մասին հոգալու հետ մեկտեղ նրանք ձգտում էին ստեղծել նաև քաղաքականության ու կրոնի հետ ոչ մի առնչություն չունեցող մշակութային կազմակերպություն: Այդպիսի կազմակերպություն իրոք որ ստեղծվեց 1925-ին Լ. Պապայանի գլխավորությամբ: Դա «Կանադահայ միություն» ակումբն էր, որի գործուն անդամներից մեկը՝ Երվանդ Սելյանը, դեռևս բնաշխարհից ունենալով երաժշտական կրթություն և փորձ, ակումբին կից կազմակերպեց երգչախումբ: Տորոնտոհայ համայնքը ոգեշնչված էր թե՛ ակումբի, թե՛ երգչախմբի գործունեությամբ: 1926-ին այդ ակումբի մի քանի երիտասարդ անդամներ հիմնադրեցին «Կանադահայ երիտասարդների միություն» կազմակերպությունը, որի մեջ սկզբում ընդգրկվեցին տասնվեցից մինչև քսանութ տարեկան երիտասարդ տղամարդիկ, իսկ հետագայում՝ նաև կանայք³⁵: Այդ միության նպատակն էր հոգալ որբացած,

³¹ Armenians in Canada. «Parochial Newsletter», Toronto, 1967, Oct. 1, vol. 1, p. 7.

³² 1 աքր ≈ 0,4 հա:

³³ Տե՛ս Կ. Քեռզեան, Ամենուն տարեգիրքը, Պէրութ, 1962, էջ 344:

³⁴ Armenians in Canada. «Parochial Newsletter», Toronto, 1967, Oct. 1, vol. 1, p. 6:

³⁵ Տե՛ս Օ. Թեգտսոնյան, Armenians in Toronto. the Early Years. «Polyphony», 1982. vol. 4, № 2, p. 97:

արմատախիլ արված, նոր շրջապատում մենակ և անօգնական մնացած հայ երիտասարդ տղամարդկանց ու կանանց նյութական ու հոգեկան կարիքները: Միության անդամները աստիճանաբար սկսեցին մասնակցել համայնքի մշակութային-կրթական գործունեությունը:

1927-ի հունվարի 25-ին Տորոնտոյի միջազգային երգահանդեսին տասից ավելի ազգությունների խմբերի հետ մասնակցել է նաև տեղի հայկական փոթորիկ, բայց լավ մարզված երկսեռ երգչախումբը, որի ղեկավարը՝ Ծրվանդ Սելյանը, տվել է հակիրճ բացատրություն հայ երաժշտության, նրա ծագման ու զարգացման վերաբերյալ: Երգչախումբը հանդես է եկել «Ալազգյազ», «Գութան», «Անձրև եկավ» և այլ երգերով՝ արժանանալով ունկնդիրների խանդավառ ընդունելությանն ու բուռն ծափահարություններին: Այդ երևույթին անդրադարձել են տեղական այլալեզու, ինչպես նաև ամերիկահայ թերթերը, որոնք բարձր են գնահատել ինչպես հայ երգն ու երաժշտությունը, նույնպես և հայ երգչախմբի կատարողական արվեստը: Նույն թվականի մարտի 24-ին Տորոնտոյի Արվեստի սրահում տեղի ունեցած ամենամյա գեղարվեստական երեկույթին տասներկու ազգերի ներկայացուցիչների թվում ելույթ է ունեցել նաև Ծ. Սելյանի երգչախումբը, իսկ մայիսի 11-ին այն հատուկ հրավերով մասնակցել է «Իստլեն Ստարգ»-ի կազմակերպած միջազգային երգահանդեսին և հասել այնպիսի հաջողության, որ հանդիսականների պահանջով լրացուցիչ երգել է ևս մի երգ, և կազմակերպիչների նախագահը բոլոր խմբերից առանձնացրել է հայ երգչախումբն ու նրա ղեկավարին, հայտնելով իր հիացումը՝ պատճառած հաճույթի համար, միաժամանակ նշելով իր խորին հարգանքը հայ ազգի նկատմամբ⁸⁶:

Հայերը Տորոնտոյի կազմակերպիչ կոմիտեի հրավերով 1927-ի հուլիսի 11-ին մասնակցում են նաև Կանադայի անկախության օրվա 60-րդ տարեդարձի տոնակատարությանը, որը նշվում է մեծ շուքով ու հանդիսավորությամբ:

Ակումբներն ու երգչախումբը մերձեցման միակ միջոցները չէին, որոնց օգնությամբ Տորոնտոյի հայկական գաղութը դառնում էր միասնական: Տորոնտոյի հայերը կանոնավոր կերպով հավաքվում էին նաև Երրորդության հրապարակում գտնվող ս. Երրորդություն անգլիկան եկեղեցու աղոթարանում⁸⁷: Եկեղեցական ծիսակատարությունների ժամանակ քահանա էր հրավիրվում ԱՄՆ-ից:

20-ական թվականներին Տորոնտոյում ստեղծվեց Կանանց հայկական փոխօգնության ընկերությունը, իսկ 1924-ին Լեոն Պապայանը կազմակերպեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կանադական մասնաճյուղը⁸⁸, 30—40-ական թվականների ընթացքում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը կանադահայ գաղութում կազմակերպեց մշակութային և բարեգործական մի շարք միջոցառումներ:

40-ական թվականների սկզբներին ՀԲԸՄ վարչական կենտրոնը Փարիզից տեղափոխվեց Նյու-Յորք և Հյուսիսային Ամերիկայում նրա նոր ճյուղեր ստեղծելու և շարժողները վերակազմակերպելու ուղղությամբ եռանդուն ջանք թափվեց: Գորգի առևտրի կապակցությամբ Լ. Պապայանը հաճախ էր այցելում Նյու-Յորք, որտեղ սերտ կապի մեջ էր գորգի մի այլ հանրահայտ

⁸⁶ «Գնատահայ» (ստորագրված Լ' Թղրակից), «Արարտ» Զորթաուն, 1927, № 6, էջ 12:

⁸⁷ Տե՛ս Օ. Teghtsoonian, Armenians in Toronto: the Early Years. «Polyphony» 1982, vol. 4, № 2, p. 97:

⁸⁸ Տե՛ս նույն տեղը:

վաճառականի՝ ՀԲԸՄ նախագահ Արշակ Ղարաբյուզյանի հետ: Այս կապը, ինչպես նաև Եվրոպայում ՀԲԸՄ ակտիվ անդամներից մեկի՝ Հմայակ Փափազյանի ժամանումը Կանադա, Տորոնտոյի հայկական համայնքին հաղորդեց նոր լիցք և կենսական ուժ: 20-ական թվականներից մինչև 40-ական թրվականների կեսերը ՀԲԸՄ Տորոնտոյի մասնաճյուղի միջոցները, որոնք նախատեսված էին օգնելու հայկական որբանոցներին, դպրոցներին և փախուստականներին՝ Կովկասում և Մերձավոր Արևելքում, զգալիորեն աճեցին և հասան 37000 դոլարի³⁹:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, հատկապես սկսած 50-ական թվականների կեսերից, Սփյուռքի տարբեր վայրերից զգալի թվով հայեր ներգաղթում են Կանադա: Դրան հատկապես նպաստում է այն հանգամանքը, որ 1948—1952 թվականների ընթացքում կանադահայ կազմակերպությունների և հասարակական գործիչների, ինչպես նաև Կանադայի ազգային ներկայացուցիչների բազմաշարժար ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ՝ հայերին կանադական ներգաղթի իշխանություններին ծանոթացնելու գործում⁴⁰, ի վերջո հաջողվեց այդ իշխանություններին համոզել, որ հայերն ունեն հնդեվրոպական ծագում և Ասիայում նրանց բնակվելը բնավ հիմք չի տալիս նրանց ասիացի համարելու: Վերջապես 1952-ին վերացվեց Կանադա մուտք գործելու արգելքը, հայերը ստացան ներգաղթի այն բոլոր առավելությունները, որ տրված էր եվրոպացիներին, և «այս հիմնական թիրիմացութեան հարթումէն ետքն ալ սկաւ Հայոց ներգաղթը դէպի Գանատա»⁴¹: Այդ ժամանակվանից սկսվեց հայերի կազմակերպված ներգաղթը Կանադա և կանադահայ գաղութի ձևավորման մեջ տեղի ունեցավ որակական փոփոխություն՝ սկսվեց գաղութի ձևավորման, բարգավաճման ու զարգացման շրջանը:

А. А. БЕКАРЯН — Формирование армянской колонии в Канаде.—

В статье изучаются два периода в истории становления армянской колонии Канады—от начала иммиграции до 1952 г. Первые поселения армян в этой стране относятся к 1880 г. Тогда переселенцы стали пополнять ряды рабочих южных городов. С 1910 г. здесь стали основываться армянские школы, клубы, библиотеки, столовые, строятся церкви, начинают действовать культурные, земляческие, благотворительные и спортивные организации. Одновременно армяне постепенно принимают все более активное участие в общественно-политической жизни Канады, в ее культуре и науке.

³⁹ Տե՛ս նույն տեղը:

⁴⁰ Տե՛ս Կ. Գեղորգեան, Ամէնուն տարեգիրքը, Պէյրուս, 1962, էջ 333—334:

⁴¹ Նույն տեղում, էջ 334: